ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

24 նոյեմբերի հինգշաբթի 2022
տպագրության ԺԱ տարի

169
(2649)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 141

«Ի հեճուկս գլոբալ դժվարությունների՝ Հայաստանն ունի շատ հստակ, որոշակի տնտեսական հաջողություններ, եւ նաեւ այս համատեքստում, իհարկե, ոչ անմիջականորեն, բայց շատ կարեւոր եմ համարում, որ մի քանի օր առաջ հրապարակված տնտեսության ազատության ինդեքսը, որտեղ Հայաստանի Հանրապետությունը զբաղեցնում է 11-րդ տեղը աշխարհի 165 երկրների շարքում: Այս սադրանքը նպատակ ունի կոտրելու Հայաստանի տնտեսական դինամիկան»,- 2022 թվականի սեպտեմբերի 13-ին Ազգային ժողովում այս մասին հայտարարեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Նրա այս հայտարարությունը կրկնել են նաեւ ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը, ՔՊ խմբակցության պատգամավորներ Գեւորգ Պապոյանն ու Բաբկեն Թունյանը: Սակայն Փաշինյանի այս հայտարարությունը եւս, մեղմ ասած, չի համապատասխանում իրականությանը: Իշխանական թիմի ներկայացուցիչների խոսքերին անդրադարձել էր «Լույս» հիմնադրամը: «2022թ.-ի տնտեսական ազատության ինդեքսի տվյալ զեկույցը հրապարակել է Fraser Institute-ը, համաձայն որի՝ Հայաստանը, այո՛, գտնվում է 11-րդ հորիզոնականում, սակայն ո՛չ նախարար Վահան Քերոբյանը, ո՛չ ՔՊ-ական պատգամավորները հարկ չհամարեցին իրենց խոսքում նշել, որ, թեեւ զեկույցը հրապարակվել է 2022թ.-ին, այն ներկայացնում է աշխարհի 165 երկրների տնտեսական ազատության պատկերը 2020թ.-ի դրությամբ»,- նշել էր «Լույս» հիմանդրամը: Հիմնադրամը նաեւ շարունակել է. «Փոխարենը նախարար Քերոբյանն ու ՔՊ-ական պատգամավորները նախընտրեցին մանիպուլացնել զեկույցում տեղ գտած արդյունքները՝ նշելով, թե այն տնտեսական բարեփոխումները, որը գործող իշխանությունները իբրեւ թե իրականացրել են վերջին 4 տարիների ընթացքում եւ այն օրենքները, որոնք ընդունել են վերջին 4 տարիների ընթացքում ամբողջովին նպաստել են Հայաստանում տնտեսական միջավայրի ազատականացմանը, եւ դրանք միայն բառեր չեն, այլ կոնկրետ գործողություններ, որոնք միջազգային կազմակերպությունները հստակ գնահատականով արձանագրել են»,- հավելել էր «Լույս»-ը: Նույն կազմակերպությունը մեկ այլ հիմնադրամի կողմից հրապարակված զեկույց էր ներկայացրել: Համաձայն «Հերիթեյջ» հիմնադրամի կողմից հրապարակված զեկույցի՝ Հայաստանում 2022թ. տնտեսական ազատության ինդեքսը նախորդ տարվա համեմատ նվազել է 6.6 միավորով եւ կազմել 65.3 միավոր, իսկ համաշխարհային վարկանիշային աղյուսակում Հայաստանի դիրքը վատթարացել է 26 հորիզոնականով, եւ նախորդ տարվա 32-րդ հորիզոնականից Հայաստանն այս տարի հայտնվել է 58-րդ հորիզոնականում: Այսինքն՝ հերթական անգամ Նիկոլ Փաշինյանն անձամբ եւ իր թիմի անդամները եւս խաբել են ՀՀ հպարտ եւ արժանապատիվ քաղաքացիներին:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ «Հայաստան» խմբակցության պատգամավոր, «Վերածնվող Հայաստան» կուսակցության նախագահ Վահե Հակոբյանը, որ հեռացել էր երկրից, երեկ վերադարձել է: Սակայն խմբակցության հետ նա հարաբերությունները սառեցրել է. հիմնականում չի մասնակցում նիստերին: Խմբակցության մեծամասնությունն անտեղյակ է. ե՞րբ է նա գնում-գալիս երկրից: «Ժողովուրդ» օրաթերթը «Հայաստան» խմբակցությունից հարցուփորձ արեց Վահե Հակոբյանի մասին, պարզվեց՝ նա իր երկու կուսակիցների հետ մեկուսացել է: Նշենք, որ «Վերածնվող Հայաստանից» ընդամենը երկու ներկայացուցիչ կա ԱԺ-ում այս պահին՝ Հռիփսիմե Ստամբուլյան, Ելենա Կիրակոսյան, որոնք Վահե Հակոբյանի հետ մի կողմ են քաշվել եւ սպասում են հարմար պահի, որ մանդատները վայր դնեն կամ սպասեն՝ իշխանությունը իրենց զրկի մանդատներից, քանի որ թույլատրելի բացակաների շեմը վաղուց անցել են: Կարճ ասած, Վահե Հակոբյանի «Վերածնվող Հայաստան» կուսակցությունը փլվում է. նրա կուսակցության 7 անդամ պատգամավորներից Աննա Գրիգորյանը, Արթուր Սարգսյանը դուրս են եկել կուսակցությունից, Մխիթար Ջաքարյանը մանդատը վայր դրեց ու հեռացել է քաղաքականությունից, անգամ երկրում չէ: Ջեմֆիրա Միրզոյեւան ասորական համայնքի ներկայացուցիչն է եւ չի գնացել Վահե Հակոբյանի հետեւից: Այսինքն՝ առաջիկայում Սյունիքի մարզի հենքով կառուցված կուսակցությունը խորհրդարանում այլեւս ներկայացուցիչ չի ունենա: Ավելի վաղ նաեւ սյունեցի նախկին ու ներկա համայնքապետերն են հրաժարվել այդ կուսակցության անդամությունից:

Թեեւ ողջ մասնագիտական ու քաղաքական հանրույթը քննարկում է հայտնի դատավոր Մնացական Մարտիրոսյանի հակակոռուպցիոն դատարանի դատավոր դառնալու հավանականության մասին, սակայն ամեն ինչ դեռ վերջնական չէ: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ միայն մեկ մարդ է որոշելու, թե Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մնացական Մարտիրոսյանը ընտրվելո՞ւ է Հակակոռուպցիոն դատարանի դատավոր, թե՞ ոչ: Եւ այդ մեկ մարդը ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն է: Ավելին՝ դատական համակարգում տարածված խոսակցությունների համաձայն՝ ՀՀ նախագահը չի ստորագրի նրա նշանակման դիմումը, եւ այն հետ կուղարկի ՀՀ Բարձրագույն դատական խորհուրդ, որից հետո որոշում կայացնողը կլինի Նիկոլ Փաշինյանը՝ նրան իրավունքի ուժով նշանակե՞լ Հակակոռուպցիոն դատարանի դատավոր, թե՞ ոչ: Նշենք, որ Մնացական Մարտիրոսյանը ԲԴԽ-ի կողմից ընտրվել է Հակակոռուպցիոն դատարանի դատավոր, եւ հիմա նրա նշանակման դիմումը ուղարկվել է ՀՀ նախագահին, որ ստորագրի: Սակայն նկատենք, որ դատավոր նշանակվելուց առաջ բոլոր թեկնածուները Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից անցնում են բարեվարքության ճանապարհով, եւ հանձնաժողովը դատավորի կամ դատավորի թեկնածուի մասին կարծիք է ներկայացնում, որը հետագայում դրվում է ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանի սեղանին, ու նախագահն է որոշում՝ դատավորին ընդունե՞լ դատական համակարգ, թե՞ առարկությամբ հետ ուղարկել: Եվ, ահա, Մարտիրոսյանի թեկնածությանը բարեվարքության մասով բացասական գնահատական է տվել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, ինչպես նաեւ՝ ԲԴԽ-ի կողմից ներգրավված միջազգային փորձագետ Վիտալի Կասկոն: Տեսնենք՝ ինչ կլինի ապագայում:

Շուրջ 5 ամիս կալանքի տակ գտնվող Նորին Սուրբ Օծություն SS Գարեգին Բ-ի եղբորորդին իր կալանքը հորեղբոր գործոնով չի պայմանավորում: Հիշեցնենք, որ Շենգավիթ վարչական շրջանի դատախազի տեղակալ Կորյուն Ներսիսյանը շուրջ կես տարի է՝ կալանքին տակ է, «Ժողովուրդ» օրաթերթի հետ Հակակոռուպցիոն դատարանում կայացած բացառիկ զրույցի ժամանակ ասել է կալանավորը: «Ժողովուրդ» օրաթերթի այն հարցին, թե այս ամիսների ընթացքում հասկացե՞լ է, թե որն է իր մեղքը, որ հայտնվել է կալանավայրում, Կորյուն Ներսիսյանը պատասխանել է. «Արդարադատությունը, իմ կարծիքով, կպարզի մեղքի խորությունը, բովանդակությունը, իսկ որպես այդպիսին՝ ես որեւէ մեղք չունեմ»: «Ժողովուրդ» օրաթերթի այն հարցին՝ արդյո՞ք իրեն պատժում են՝ պահելով կալանքի տակ իր կաթողիկոս հորեղբոր գործունեության մասով, Շենգավիթի դատախազի տեղակալ Կորյուն Ներսիսյանը նշեց. «Թույլ տվեք նման առարկայական հանգամանքներին չանդրադառնամ, որովհետեւ, ըստ էության, այդ ամեն ինչը ես որեւիցե ձեւով չեմ ուզում կապել այս իրավիճակի հետ»: Ինչպես հայտնի է՝ այս տարվա հունիսի 11-ին ազգային անվտանգության ծառայության կողմից ՀՀ դատախազության հետ համագործակցությամբ ձեռնարկված մեծածավալ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ Երեւան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազի տեղակալ Կ.Ն.-ն, հանդիսանալով պաշտոնատար անձ, Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում քննվող քրեական գործով ամբաստանյալ Ն. Դ.-ի նկատմամբ մեղմ պատիժ նշանակելուն նպաստելու համար, պաշտոնեական դիրքն օգտագործելով, Գ.Գ.-ի եւ Ն.Ա.-ի օժանդակությամբ եւ միջնորդությամբ Ն.Դ.-ից ստացել է առանձնապես խոշոր չափերով՝ 2.500.000 ՀՀ դրամ կաշառք: Կորյուն Ներսիսյանը 5 ամիս է՝ կալանքի տակ է, եւ գործը հասել է Հակակոռուպցիոն դատարան:

ՓԱՇԻՆՅԱՆԸ ՆՎԵՐ Է

ԴԵՊԻ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆԱՑՈՒՄ

Մինչեւ Երեւան՝ ՀԱՊԿ գագաթնաժողովին մասնակցելու գալը, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի ունեցած հեռախոսազրույցը, քաղաքագետ Գագիկ Համբարյանի գնահատմամբ, պատահական չէր: Նա վստահ է՝ ՀԱՊԿ անդամ երկրների ղեկավարներից միայն Պուտինն է կարողանում Ալիեւի հետ հարցեր լուծել, քանի որ շատ դեպքերում ՀԱՊԿ մյուս երկրները չեն կարողանում ազդել Ադրբեջանի վրա: «Բացարձակ պարտավոր էլ չեն ազդելու Ադրբեջանի վրա, քանի որ Ալիեւը վերջերս իր կողմից արված հայտարարության մեջ ամենեւին էլ պատահական չասաց, որ Ադրբեջանն, ի տարբերություն Հայաստանի, ՀԱՊԿ-ում ավելի շատ ընկերներ եւ գործընկերներ ունի»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասում է Համբարյանը:

Հայ-ադրբեջանական սահմանին տեղի ունեցող հակամարտությունը, քաղաքագետի համոզմամբ, ՀԱՊԿ-ը ու Ռուսաստանին վարկաբեկելու միջոց է, ինչի հետեւում թուրք-ադրբեջանական տանդեմն ու նրանց հայաստանյան գործընկեր Նիկոլ Փաշինյանն են կանգնած: Այս հանգամանքը, շեշտում է մեր զրուցակիցը, Ռուսաստանը պետք է հաշվի առներ, որպեսզի Փաշինյանը չկարողանա հայաստանյան հասարակությանը համոզել, թե ՀԱՊԿ-ն իրենից ոչինչ չի ներկայացնում: «Այսինքն՝ Հայաստանի ներկայիս իշխանությունները ջանք ու եռանդ չեն խնայել՝ հայաստանյան հասարակությանը հասկացնելու համար, որ, ընդհանուր առմամբ, Հայաստանի Հանրապետությունն այդ ռազմաքաղաքական կազմակերպության՝ ՀԱՊԿ-ի մեջ կարիք չկա, որ լինի: Ինչպես նաեւ արվել է հնարավորը Ռուսաստանին՝ որպես ռազմավարական գործընկերոջ, վարկաբեկելու համար»,- մանրամասնում է Համբարյանը:

Սեպտեմբերի 13-ի մեկօրյա պատերազմի ժամանակ ու դրանից հետո, ասում է Համբարյանը, իշխանամերձ լրատվամիջոցներն իրավիճակն այնպես են ներկայացրել, թե դա ՀԱՊԿ-ի պարտությունն է կամ Ռուսաստանի կողմից դաշնակցային պարտականությունները չկատարելու հետեւանք է: «Բայց այդ ամենին զուգահեռ՝ սեպտեմբերի 13-ից հետո հայաստանյան հասարակությունը մեկ անգամ ինքն իրեն ու պատկան մարմիններին չհարցրեց՝ բա մենք բանակ չունե՞նք, որ կպաշտպաներ մեր անվտանգությունը, կամ այս երկու տարվա մեջ Նիկոլ Փաշինյանը բանակի մարտունակությունը վերականգնելու համար ի՞նչ է արել: Սրանք բոլորը հարցեր են, որ մեր քաղաքացիներն, առաջին հերթին, պատկան մարմիններին ու գերատեսչություններին պետք է ուղղեին: Միշտ էլ կարելի է ՌԴ-ին կամ մեկ ուրիշին մեղադրել, բայց հարցին առաջինը ինքներս պետք է պատասխանենք»,- մանրամասնում է քաղաքագետը:

Եվ հիմա, շարունակում է, ՀԱՊԿ-ը պետք է ինչ-որ քայլեր ձեռնարկի, ոչ միայն իր երեսը փրկի, այլ նաեւ Հայաստանի ու միջազգային հանրությանը համոզի, որ «պուտինյան ՆԱՏՕ» համարվող ՀԱՊԿ-ը բուտաֆորիա չէ:

Ինչ վերաբերում է Պուտինի այցից հետո Հայաստանի՝ Միութենական երկրի մաս դառնալու մեր դիտարկմանը, ապա քաղաքագետ Համբարյանն այդ մասով հետեւյալ համոզումն ունի. «Պուտինի համար որքան թույլ լինի ՀՀ վարչապետ Փաշինյանը, միջազգային հարթակներում որքան վարկաբեկվի ՀՀ վարկը, այնքան նրա համար ավելի լավ ու ավելի հեշտ կլինի Հայաստանը Միութենական երկրի մաս դարձնելը: Չեմ կարծում՝ այդ գործընթացն առաջիկայում հենց միսուարյուն կստանա, բայց եւ հստակ է՝ այն, վաղ թե ուշ, կյանքի է կոչվելու: Ի վերջո, Փաշինյանը նվեր է բոլորի համար. թե՛ Վաշինգտոնի, թե՛ Բրյուսելի, թե՛ Մոսկվայի, թե՛ Բաքվի, թե՛ Անկարայի համար: ՀՀ վարչապետը բացարձակ ձեռնտու չէ միայն Հայաստանին ու Իրանին, քանի որ պաշտոնական Թեհրանի արտաքին քաղաքականությունը շատ ավելի կանխատեսելի է»:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

ԱԶԱՏՈՒՄՆԵՐԻ ՇՔԵՐԹ

Արցախի պետական նախարար Ռուբեն Վարդանյանը թեեւ նոր-նոր է պաշտոնի նշանակվել, բայց արդեն իրական կադրային ջարդ է սկսել: Երեկ նա պաշտոնից ազատել է կաբինետի բոլոր նախարարներին ու միայն չորսին որպես պաշտոնակատար նշանակել: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ պետնախարարի ազատումների շքերթը ոչ միայն Արցախի քաղաքական ուժերին, այլ նաեւ գործադիրի, օրենսդիրի ու ուժային կառույցների ներկայացուցիչներին է անակնկալի բերել: Մեր օրաթերթի՝ արցախյան աղբյուրները փոխանցեցին, որ մինչեւ այս պահը նոր անուններ չեն շրջանառվում: «Այդ տեղեկությունը նա խիստ գաղտնի է պահում: Հայտնի էլ չէ, թե այս մասով ո՞ւմ հետ է քննարկումներ ունենում, կամ, առհասարակ, քննարկումներ ունենո՞ւմ է, թե՞ ինքն անձամբ է որոշումներ կայացնում»,- ասաց մեր զրուցակիցն ու ավելացրեց, որ Արցախի կառավարական նոր կաբինետն, ըստ երեւույթին, արցախցիներից չի ձեւավորվի: «Կա՛մ Հայաստանից կադրեր կբերի, կա՛մ էլ՝ դրսից: Անընդհատ շեշտում է, թե այսօր Արցախում ոչ ստանդարտ լուծումներ են պետք, ու դրա համար, ըստ երեւույթին, «ոչ ստանդարտ» լուծումների մասնագետների առաջին պլան կբերի»,- ավելացրեց մեր զրուցակիցը:

ԻՐԱՎԻՃԱԿ Է ՓՈԽՎԵԼ

2019 թվականին, երբ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը կրկին Երեւան էր ժամանել՝ մասնակցելու ԵԱՏՄ ընդլայնված նիստին, այդ ժամանակ նրան «Զվարթնոց» օդանավակայանում ոչ թե Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, այլ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանն էր դիմավորել: Միջադեպը թե՛ քաղաքական վերլուծաբանների, թե՛ քաղաքական գործիչների սուր քննադատությանն էր արժանացել, բոլորը մեղադրել էին Փաշինյանին, թե նման գործելաոճով նա ստվեր է գցում հայ-ռուսական դաշնակցային հարաբերությունների վրա: Ու թեեւ Փաշինյանը նույն օրը՝ երեկոյան, ՌԴ նախագահին անձամբ էր ճանապարհել «Զվարթնոց» օդանավակայանից, բայց եւ հայտարարել էր, թե հայ-ռուսական հարաբերություններն այժմ նոր օրակարգով են ընթանում:

Այսօր արդեն, երբ ՀԱՊԿ գագաթնաժողովի շրջանակներում Պուտինը կրկին Հայաստանում է, նրան Փաշինյանն անձամբ է դիմավորել, ավելին՝ Պուտինի հետ նույն ավտոմեքենայով Դվին հյուրանոց՝ գագաթնաժողովի անցկացման վայր է մեկնել: Փաշինյանի համար, փաստորեն, այժմ իրավիճակ է փոխվել:

Ս. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ԻՐԱՎԻՃԱԿԸ ՍԱՀՄԱՆԻՆ

«Մեզ մոտ ամեն ինչ նոմալ է: Այս պահին ես դիրքերի տակ վար եմ անում, որեւէ կրակոց չկա»: Այս մասին ArmLur.am-ի հետ զրույցում ասաց Գեղարքունիքի մարզի սահմանամերձ Կուտական վարչական շրջանի ղեկավար Մակիչ Թովմասյանը:

Նշենք, որ նոյեմբերի 22-ին՝ ժամը 22:00-22:45-ը, Ադրբեջանի ԶՈՒ ստորաբաժանումները տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներից կրակ են բացել հայ-ադրբեջանական սահմանի արեւելյան հատվածում տեղակայված հայկական դիրքերի ուղղությամբ:

Հայկական կողմը կորուստներ չունի: Նոյեմբերի 23-ի՝ ժամը 10:00-ի դրությամբ, իրադրությունն առաջնագծում հարաբերականորեն կայուն է:

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ ԵՆ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻՑ

Դեռեւս այս տարվա հունվարին հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ Ստեփանակերտում տեղի ունեցած հանդիպումից հետո Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանը խոսել էր Սահմանադրության հնարավոր փոփոխության մասին:

Սահմանադրական փոփոխությունները, ինչպես ավելի ուշ մանրամասնեցին, նախագահական համակարգից հրաժարվելու եւ կիսանախագահականին վերադառնալու համար էին արվելու: Նպատակը, ըստ արցախյան քաղաքական տարբեր ուժերի ներկայացուցիչների, Արցախի համար վճռորոշ որոշումներ ընդունելիս՝ կոլեկտիվ պատասխանատվությամբ առաջնորդվելն էր:

Սակայն նոյեմբերի 23-ին, Արցախի Ազգային ժողովի արտահերթ նիստի ժամանակ Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանը դիմել է Արցախի ԱԺ նախագահին՝ ԱՀ Սահմանադրության փոփոխության նախագիծը վերադարձնելու նպատակով:

«Ինչո՞ւ է նախագիծը հետ կանչվում, արդյո՞ք սա Սահմանադրությունը փոփոխելու մտքից հետ կանգնել է նշանակում»,- հարցն Արցախի նախագահի մամուլի քարտուղար Լուսինե Ավանեսյանին ուղղեցինք:

Ի պատասխան՝նա նշեց, որ Արցախի նախագահը սահմանադրական բարեփոխումների հետագա գործընթացի վերաբերյալ առաջիկայում շարունակելու է քաղաքական կոնսուլտացիաները:

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ

Ազգային ժողովը այսօր՝ նոյեմբերի 24-ին, արտահերթ նիստ կգումարի: ArmLur.am-ը տեղեկացավ, որ արտահերթ նիստի օրակարգում հիմնական հինգ հարց-օրինագիծ է ներառված, որոնք իրենց հերթին մի քանի ենթահարցեր ու օերնսդրական փաթեթներ են ներառում:

Խորհրդարանականները կքննարկեն «Ազգային անվտնագության մարմինների ծառայության», «Ավտոմոբիլային տրանսպորտի», «Ժամանակավոր անաշխատունակության եւ մայրության», մասին օրենքներում, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության հարկային ու Ընտրական օրենսգրքերում լրացումներ ու փոփոխություններ անելու հարցերը:

ՆԱԽԱԳԻԾ Է ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ

Պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների ներկրումը, պահեստավորումը, կիրառումը (շահագործումը), ինչպես նաեւ հրագործական, արտադրատեսակների, ներմուծմամբ զբաղվելու գործունեությունը, արտադրությունը, պահեստավորումը, առեւտուրը եւ կիրառումը կդառնա պարտադիր լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ: Այդպիսի նախագիծ է ներկայացրել ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Սիսակ Գաբրիելյանը: Հիմնավորման մեջ նշվում է, որ այս նախագիծը ներկայացնելու համար հիմք է հանդիսացել այս թվականի օգոստոսի 14-ին Երեւան քաղաքի «Սուրմալու» առեւտրի կենտրոնում տեղի ունեցած խոշոր աղետը: Ներկայումս հրագործական նյութերի արտադրությունը, ներմուծումը եւ առեւտուրն իրականացվում են «Գործունեության իրականացման ծանուցման մասին» ՀՀ օրենքով սահմանված ծանուցման ենթակա գործունեության իրականացման պարզ ընթացակարգով, սակայն նշվում է, որ այդ գործառույթներն իրենց մեջ պարունակում են անվտանգության, առողջապահական եւ այլ բաղադրիչներ, ուստի անհրաժեշտություն է առաջացել գործընթացը բերել լիցենզավորման դաշտ, ինչը հնարավորություն կտա վերահսկողության ավելի գործուն միջոցներ ձեռնարկելու եւ լիցենզիաների տրամադրման ելակետային չափորոշիչներ եւ պարտադիր պահանջներ սահմանելու համար: Հրագործական արտադրատեսակների արտադրությունը, վտանգավորության աստիճանով պայմանավորված, առաջարկվում է նաեւ դարձնել որպես փորձաքննության ենթակա լիցենզավորման գործունեության տեսակ այն մոտեցմամբ, ինչը նախատեսված է պայթուցիկ նյութերի եւ պայթեցման սարքավորումների արտադրության պարագայում: Նշվում է նաեւ, որ նախագիծը մշակվել է Երեւանի փոխքաղաքապետ Տիգրան Ավինյանի եւ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության մասնակցությամբ:

ՀՐԱԺԱՐՎԵԼ Է ՑՈՒՑՄՈՒՆՔ ՏԱԼ

ArmLur.am-ի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ Գագիկ Բեգլարյանը հրավիրվել է ԱԱԾ եւ ծանոթացել ԱԱԾ-ի կողմից իր նկատմամբ հարուցված քրեական վարույթին, սակայն մեր տեղեկություններով՝ երբ հերթը հասել է հարցաքննության, Գագիկ Բեգլարյանն ասել է, որ օգտվելով իր իրավունքից՝հրաժարվում է ցուցմունք տալ: Ասել է, թե 24 գույքի հափշտակության գործով Երեւանի քաղաքապետը հրաժարվել է ցուցմունք տալ: Հիշեցնենք, որ օրերս Գլխավոր դատախազությունում ուսումնասիրվել է Ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում քննվող քրեական վարույթը, որի ընթացքում պարզվել է, որ 2002-2010 թվականների ընթացքում Երեւան քաղաքի Կենտրոն թաղային համայնքի ղեկավարի, այնուհետեւ Երեւանի քաղաքապետի պաշտոնը զբաղեցրած Գ.Բ.-ն, պաշտոնեական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ, ինչպես նաեւ պաշտոնեական դիրքի օգտագործմամբ, յուրացման եղանակով հափշտակել է առանձնապես խոշոր չափերի՝ Երեւան քաղաքում եւ այլ բնակավայրերում գտնվող բազմաթիվ անշարժ գույքեր: Խոսքը 24 գույքի եւ երեք հողամասի մասին է:

ՈՉ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ

ՈՂՋ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ՝ ՄԻ ՀԱՐԿԱԲԱԺՆՈՒՄ

ՀՀ Առողջապահության նախարարությունը 2022 թվականի ապրիլի 7-ի Կառավարության որոշման համաձայն՝ միաձուլման ձեւով վերակազմակերպեց երկու անհամատեղելի կառույցների՝ «Մաշկաբանության ազգային կենտրոն» եւ «Այրվածքաբանության ազգային կենտրոն»-ները՝ ստեղծելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Այրվածքաբանության եւ մաշկաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՀՀ Առողջապահության նախարարությունը որոշում է կայացրել Դավիթաշեն վարչական շրջանում գտնվող Այրվածքաբանության ազգային կենտրոնի տարածքը տրամադրել Պետական առողջապահության գործակալությանը (ՊԱԳ)-ին, իսկ Այրվածքաբանության ազգային կենտոնը նախատեսվում է տեղափոխել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ՝ տեղավորելով մի հարկում: Գլխավորն այն է, որ նախարար Ավանեսյանի սրտի ֆինանսիստը՝ ՊԱԳ ղեկավար Ահարոն Բարսեղյանը, ունենա առանձին մասնաշենք: Հիշեցնենք, որ Բարսեղյանը այստեղ է տեղափոխվել աշխատանքի Անահիտ Ավանեսյանի մայրիկին պատկանող տարածքում գտնվող «Վիգմոր» կլինիկայի ֆինանսիստի հաստիքից: Իսկ նախարարն ամեն ինչ անում է՝ հրապարակավ ապացուցելու, թե «Վիգմոր» կլինիկայի հետ որեւէ առնչություն չունեն ընտանքով:

Ինչեւէ, դառնալով կայացված որոշմանը՝ նշենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը բազում դժգոհություններ է ստացել այն մասին, որ Առողջապահության նախարարության անհեթեթ որոշման արդյունքում կրճատվում է աշխատակիցների հաստիքացուցակը եւ ավելանում է գործազրկությունը:

Ամեն դեպքում, խնդրի առնչությամբ «Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց կողմերի հետ՝ հասկանալու, թե ինչպես պետք է մեկ հարկաբաժնում կազմակերպվի մի հսկա կառույցի աշխատանքը: Այրվածքաբնության ազգային կենտրոնի տնօրեն Արթուր Բերբերյանն ասաց, թե. «Բոլոր հարցերով դիմեք Առողջապահության նախարարություն»: Իսկ, ահա, «Մաշկաբանության ազգային կենտրոնի» տնօրեն Հովհաննես Հովհաննիսյանն ասաց, որ շարունակում են կատարել իրենց մասնագիտական պարտականությունները, ավելին ասել չի կարող:

Այսպիսով՝ ՀՀ առողջապահության իրավաբան նախարարը իր ոչ պրոֆեսիոնալ մոտեցմամբ եւս մեկ անգամ հարցականի տակ է դնում առողջապահական ոլորտի երկու կարեւոր ուղղությունների գործունեությունը՝ արդյունքում խառնաշփոթ ստեղծելով առողջապահական ոլորտում: Հիշեցնենք, որ նախարար Անահիտ Ավանեսյանն առողջապահական ոլորտի հետ որեւէ առնչություն չունի: Ավելին՝ Կառավարության որոշման մեջ անգամ մեկ նախադասությամբ ընդգծված չէ, թե ինչ է լինելու «Մաշկաբանության ազգային կենտրոնի» ճակատագիրը:

Բայց սա չի խանգարում, որ լայն ժպիտով գնա, կանգնի եւ լուսանկարվի ճապոնացիների կողմից նվեր ուղարկված շտապօգնության մեքենաների ֆոնին:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՅՏՆԻ Է ՎԱՅՐԸ

Նոյեմբերի 22-ին տեղի է ունեցել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության նիստ, որը վարել է վարչության նախագահ, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Այս մասին տեղեկացնում են կուսակցությունից:

Նշվում է, որ քննարկվել է վարչության նախորդ նիստում կայացված մի շարք որոշումների կատարման ընթացքը, որոշվել է կուսակցության քաղաքական ժողովի առաջին նիստը անցկացնել դեկտեմբերին՝Ջերմուկ քաղաքում:

Որոշվել են վարչության նախագահի տեղակալների համակարգման ոլորտները. տեղակալների նշանակումը տեղի կունենա առաջիկա նիստերից մեկում: Քննարկվել եւ լրամշակման է ուղարկվել կուսակցության աշխատակազմի հաստիքացուցակը:

Նիստի ընթացքում մտքեր են փոխանակվել Գյումրիի եւ Սպիտակի ավագանիների՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունների գործունեության վերաբերյալ:

Օրակարգում ընդգրկված են եղել նաեւ աշխատակարգային հարցեր:

ԵՌԱԿՈՂՄ ՀՈՒՇԱԳԻՐ

Կարեւորելով 2016 եւ 2020թթ. ռազմական գործողությունների մասնակիցների կրթության, աշխատաշուկայում մրցունակության բարձրացման եւ զբաղվածության ապահովման ուղղությամբ պետություն-մասնավոր հատված ջանքերի համախմբումը՝ Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության, «Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման» եւ «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամների միջեւ համագործակցության հուշագիր է ստորագրվել:

Նախարարությունից հայտնում են, որ հուշագրի շրջանակում կողմերը պարտավորվել են ստեղծել առցանց հարթակ, որի միջոցով կհամակարգվի պետության, հասարակական կազմակերպությունների, հիմնադրամների եւ մասնավոր հատվածի աշխատանքները: Հարթակը հնարավորություն կտա նույնականացնել շահառուներին, համադրել տարբեր կառույցների կողմից նրանց տրամադրվող ծառայությունները եւ գնահատված կարիքի հիման վրա ուղղորդել նպատակային աջակցություն ստանալու:

ԱՐՑԱԽԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐ

ՀՀ արտաքին գործերի նախկին նախարար Վարդան Օսկանյանը կնշանակվի Արցախի ԱԳ նախարար: Այս մասին հայտնում են MediaHub-ի արցախյան աղբյուրները: Ավելի վաղ հայտնել էինք, որ Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանի հրամանագրով՝ Դավիթ Բաբայանն ազատվել է արտաքին գործերի նախարարի պաշտոնից եւ նշանակվել արտաքին գործերի նախարարի ժամանակավոր պաշտոնակատար:

ԴԻՄՈՒՄ ԴԱՏԱՐԱՆ

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏԸ՝ ԸՆԴԴԵՄ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ ՀՀ ոստիկանությունը դիմել է ՀՀ վարչական դատարան՝ ընդդեմ 44-օրյա պատերազմում զոհված զինծառայողների ծնողների եւ պահանջում է, որ դատարանը զոհված զինծառայողների ծնողներ Գարիկ Գալեյանին, Գեւորգ Մնջոյանին, Ասոն Ասլիկյանին, Աննա Մկրտչյանին, Արմեն Գալստյանին, Արամ Ավանեսյանին, Մեսրոպ Եղիազարյանին, Վիգեն Ազատյանին, Երվանդ Տաշչյանին, Իգոր Մարգսյանին, Վահիդ Սահակյանին, Անի Կարապետյանին, Գրիգոր Ջավախյանին, Գեղամ Անտոնյանին,Վարդան Ղազարյանին ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածի պահանջով ենթարկի վարչական պատասխանատվության:

Նկատենք, որ ոստիկանությունը բավականին ակտիվ կերպով մտել է դատարան եւ բարձրացնում է ծնողներին պատասխանատվության ենթարկելու հարցը, իսկ ով պետք է պատասխան տա ծնողների նկատմամբ բռնության դեպքով: Այդ միջադեպից անցել է 2 ամիս, եւ մինչ օրս քրեական վարույթով որեւէ մեկը պատասխանատվության չի ենթարկվել, ոստիկանապետ Վահե Ղազարյանը հրաժարական չի տվել եւ այս պայմաններում դատի է տվել ծնողներին, սա է Հայաստանի արդարադատությունը: Իսկ թե ինչ կանի դատարանը, կհետեւենք զարգացումներին:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ մեր տեղեկություններով՝ 2022 թվականի սեպտեմբերի 21-ին «Եռաբլուր»-ում տեղի ունեցած խայտառակ միջադեպի առիթով ծառայողական քննությունը կասեցվել է: Հիշեցնենք, որ «Եռաբլուր» զինվորական պանթեոնում տեղի ունեցած քաշքշուկի առիթով ՀՀ ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում ծառայողական քննություն էր սկսվել:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում գործի կասեցման մասին մեր ունեցած տեղեկությունը հաստատեց ՀՀ ոստիկանության պետի տեղակալ Արա Ֆիդանյանը: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ երբ Քննչական կոմիտեում քրեական գործ կամ վարույթ է հարուցվել, ոստիկանությունը որոշել է ներքին անվտանգության վարչությունում առկա քննությունը կասեցնել մինչեւ այդ քրեական գործի ավարտը: Այսինքն՝ Քննչական կոմիտեի քննության ավարտից հետո ոստիկանության ղեկավարությունը իր համապատասխան քայլերը կիրականացնի:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ միջադեպից միայն մի քանի օր անց հարուցված քրեական գործով մինչեւ օրս որեւէ ոստիկան կամ հրաման տվող սպա պատասխանատվության չի ենթարկվել: Նշենք, որ կան ծնողներ, որոնց մարմնական վնասվածքներ ստանալու փաստը փորձաքննությամբ հաստատված է, ծնողները տուժող են ճանաչվել, սակայն ոչ ոք պատասխանատվություն չի կրել առ այսօր:

Թերեւս չի էլ լինի պատիժ, քանի որ այդ ծեծն ակնհայտորեն ուներ քաղաքական հրահանգ, ու այդ մասին վկայում է շուրջ երկու ամիս տեւող քննությունը, որի արդյունքում մինչ օրս չկա մեղադրյալ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԹՄՐԱՄԻՋՈՑԻ ԻՐԱՑՄԱՆ ԴԵՊՔ

Նոյեմբերի 14-ին ոստիկանության Աշտարակի բաժնի քրեական հետախույզները թմրանյութ պահելու, օգտագործելու եւ իրացնելու կասկածանքով ձերբակալել են Բյուրականի 45-ամյա մի բնակչի:

Ոստիկանությունից հայտնում են, որ նրա խուզարկությամբ հայտնաբերվել է մարիխուանայի նմանվող դեղնականաչավուն զանգվածով փաթեթ: Հետագա միջոցառումների շնորհիվ հայտնի է դարձել, որ նա թմրամիջոցը ձեռք է բերել Բյուրականի 39-ամյա մի բնակչից եւ պետք է փոխանցեր Արագածոտնի մարզի Ղազարավան գյուղում բնակվող 48-ամյա ազգականին:

Նախաձեռնվել է քրեական վարույթ: Նոյեմբերի 15-ին իրավապահները խուզարկել են եւ՛ բյուրականցու, եւ՛ ղազարավանցու բնակության վայրերը: Ղազարավանում հայտնաբերվել է կանեփանման բույս, իսկ Բյուրականում եղել են կանեփանման զանգվածներ՝ ընդհանուր 260 գրամից ավելի քաշով, կիսաչոր, կանեփանման 24 բույս, 2 կաթուցիչ, նաեւ պայթուցիկ նյութ՝ քուղով:

Նրա հայտնածով՝ կանեփն ինքն էր ցանել ու մշակել, նաեւ թմրանյութն իրացրել էր համագյուղացի 45-ամյա տղամարդուն, որին Արտաշատի ոստիկանները ձերբակալել էին նախորդ օրը: Բյուրականցի տղամարդը կալանավորվել է:

Ապօրինի թմրաշրջանառության եւս մեկ դեպք Աշտարակի ոստիկանները բացահայտել են նոյեմբերի 18-ին՝այս անգամ Արագածոտնի մարզային վարչության գործընկերների հետ ուժեղացված ծառայություն իրականացնելիս: Երեկոյան ժամը հինգին Աշտարակի Տիգրան Մեծի փողոցում նրանք ձերբակալել եւ բաժին են տեղափոխել Երեւանի բնակիչ, 27-ամյա մի երիտասարդի: Նրա խուզարկությամբ հայտնաբերվել է մարիխուանայի նմանվող զանգվածով երկու փաթեթ:

Ապօրինի թմրաշրջանառության հաջորդ բացահայտումը նոյեմբերի 21-ին էր: Իրացնելով օպերատիվ տվյալները՝ Աշտարակի Ղազար Փարպեցու փողոցում Աշտարակի քրեական հետախույզները ձերբակալել եւ բաժին են տեղափոխել Արմավիրի մարզի Մայիսյան համայնքի բնակիչ, 30-ամյա մի տղամարդու: Նրա խուզարկությամբ հայտնաբերվել են մարիխուանայի նմանվող զանգված ու մոխրացած հետքերով կաթուցիչ:

Բոլոր դեպքերով նշանակվել են փորձաքննություններ, հանգամանքները նախաքննությամբ պարզվում են:

ԱՊՕՐԻՆԻ ԾԱՌԱՀԱՏՈՒՄ

Ոստիկանության Վայքի բաժնի ծառայողներն օրերս կազմակերպել էին ուժեղացված ծառայություն, որի ընթացքում Ազատեկ բնակավայրում բացահայտվել է ապօրինի ծառահատման երկու դեպք: 54-ամյա եւ 50-ամյա երկու բնակչի հողամասերի հարակից ձորակներում հայտնաբերվել է ընդհանուր 15 հատված ուռենի: Ոստիկանությունից հայտնում են, որ պարզվել է, որ ծառերը ապօրինի հատել են վերոհիշյալ տղամարդիկ:

Ոստիկանությունը շարունակելու է հետեւողական քայլեր իրականացնել ապօրինի ծառահատումները բացահայտելու եւ կանխելու ուղղությամբ: Դեպքերի վերաբերյալ կազմված փաստաթղթերն ուղարկվել են Վայոց Ձորի մարզային քննչական վարչություն: Հանգամանքները պարզվում են:

ԼՈՒՐԵՐ

ԴԱՆԱԿԱՀԱՐԵԼ ԵՆ

Նոյեմբերի 18-ին ոստիկանության Նոր Նորքի բաժնում հաղորդում էր ստացվել, որ Բաղյան փողոցի թիվ 9 շենքի մուտքի մոտ մի խումբ անձինք ծեծել են մի տղամարդու եւ դանակահարել նրան: 42-ամյա տուժողը տեղափոխվել էր «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն:Ոստիկանությունից հայտնում են, որ ախտորոշվել էր պոլիտրավմա: Ոստիկանության Նոր Նորքի բաժնից դեպքի վայր մեկնած օպերատիվ խումբը կարճ ժամանակում պարզեց կատարվածի հանգամանքները: Դեպքից ժամեր անց բաժնի քրեական հետախույզները Մոլդովական փողոցում հայտնաբերել եւ ձերբակալել են 18-ամյա մի երիտասարդի: Հանցագործության գործիք դանակը հայտնաբերվել է: Կատարվում է նախաքննություն:

Հանգամանքները պարզվում են:

ԿԵՂԾ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր դատախազությունը 2022 թվականի հոկտեմբերի 28-ին տեղեկացրել էր, որ 2001 թվականի սեպտեմբերի 25-ին, Երեւան քաղաքի «Առագաստ» սրճարանի զուգարանի միջանցքում Պողոս Պողոսյանին կյանքից զրկելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործով փորձագետներ Շ.Գ-ի եւ Գ.Հ.-ի կողմից ակնհայտ կեղծ եզրակացություն տալու փաստով 2022 թվականի հոկտեմբերի 26-ին նախաձեռնվել է քրեական վարույթ: Դատախազությունից հայտնում են, որ նշված վարույթի շրջանակում նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի կողմից 2022 թվականի նոյեմբերի 17-ին դատաբժիշկներ Շ.Գ-ի եւ Գ.Հ.-ի նկատմամբ կայացվել են հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշումներ եւ դրանք ուղարկվել են նախաքննություն իրականացնող քննիչին՝ մեղադրյալներին ներկայացնելու համար: 2022 թվականի նոյեմբերի 21-ին հսկող դատախազի համաձայնությամբ նախաքննություն իրականացնող քննիչի կողմից որոշումներ են կայացվել պայմանագրային հիմունքներով աշխատող մեղադրյալներ Շ.Գ-ի եւ Գ.Հ.-ի նկատմամբ պաշտոնավարման կասեցումը որպես խափանման միջոց ընտրելու մասին, ինչը ենթադրում է վերջիններիս լիազորությունների իրականացման կամ աշխատանքային գործունեության ժամանակավոր ընդհատում: Որոշման պատճենն ուղարկվել է ՀՀ առողջապահության նախարարության դատական բժշկության գիտագործնական կենտրոն՝այն կատարելու համար:

ՆԻՍՏԸ ՀԵՏԱՁԳՎԵՑ

Երեկ Երեւանում ընթանում էր ՀԱՊԿ նիստը: Այս հանդիպման հետեւանքով դատական համակարգը կարծես պարալիզացվել էր: Մասնավորապես դատական նիստեր էր հետաձգվել, քանի որ դատախազները չէին կարողացել հասնել դատարաններ: Իսկ այդ ժամանակ Հակակոռուպցիոն դատարանում Գարեգին Բ-ի դատախազ եղբորորդու գործով դատական նիստը հետաձգվել էր նույն պատճառով: Ավելին՝ կալանավորներին կալանավայրերից շատ շուտ էին բերել դատարան, որպեսզի խցանման մեջ չընկնեն, սակայն դատախազները չէին կարողացել ժամանակին հասնել դատարան:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝նոյեմբերի 22-ից 23-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 61 դեպք, որից 4-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ՄԹԵՐՄԱՆ ԽՆԴԻՐ ԿԱ

Նոյեմբերյան խոշոր համայնքի սահմանամերձ Ոսկեպար գյուղից խորհրդային տարիներին եւ հատկապես Հայաստանի անկախանալուց հետո մեծ արտագաղթ է եղել: Ոսկեպարցիները հիմնականում արտագաղթել են Ռուսաստան, հաստատվել Բելգորոդի մարզի Ստարի Օսկոլ քաղաքում, Վորոնեժում, Կուրսի մարզի Օբոյան քաղաքում եւ այլուր: Ներկայումս Ոսկեպարը փաստացի ունի մոտ 700 բնակիչ: Ոսկեպարցիներն այժմ հողագործությամբ զբաղվում են միայն տնամերձ տարածքներում, գյուղի վարելահողերը չեն մշակում՝ գերադասելով զբաղվել խոշոր եղջերավոր անասուններ պահելով, որոնք արածում են Ոսկեպարի մերձակա դաշտերում եւ անտառներում: Ոսկեպարի վարչական ղեկավար Իշխան Աղբալյանը հայտնեց, որ գյուղի նախկին ղեկավարների օրոք ինչ-որ ծրագրով Ոսկեպարում կառուցվել եւ գործարկվել է մոտ 15 տոննա տարողությամբ մրգերի սառնարան-չորանոց, որը տարիներով անգործության է մատնվել: Նա ասաց, որ ոսկեպարցիները անտառներից վայրի մրգեր, հատապտուղներ են հավաքում, վաճառում մրգեր ընդունողներին, այդ մրգերը կարող էին պահպանվել, մշակվել գյուղի մեծ սառնարան-չորանոցում: Վարչական ղեկավարի խոսքերով՝ այս տարի ոսկեպարցիները անտառից մեծ քանակությամբ հոն են հավաքել եւ այն իրացրել կիլոգրամը մոտ 150 դրամով: Ի. Աղբալյանը հայտնեց, որ Ոսկեպարից գործարար մարդիկ այժմ շահագործման են վերցրել գյուղի սառնարան-չորանոցը: Ոսկեպարում 6 ընտանիք կա, որոնք 50-60-ական գլուխ խոշոր եղջերավոր անասուն են պահում: Ոսկեպարում մոտ 900 խոշոր եղջերավոր անասուն կա, սակայն կովատերերը չեն կարողանում իրացնել կաթը, երբեմն Կոթի գյուղից կաթնամթերքի արտադրամաս ունեցող անհատ ձեռներեց է գալիս, ոսկեպարցիներից կաթ հավաքում: Կաթի մթերման գինը, ըստ սեզոնի, կազմում է 120 կամ 130-150 դրամ: Ոսկեպարում կաթի ընդունման կետ, կաթնամթերքի արտադրություն գործարկելը կլուծի տեղի անասնապահների համար կարեւոր՝ կաթի իրացման խնդիրը:

ՔԱՆԴԵԼՈՒ ԵՆ

2021 թվականի օգոստոսի սկզբից Տավուշի սահմանագոտում հաստատված Ռուսաստանի զինուժը մարզում երկու զորանոց է կառուցել, որոնցից մեկը գտնվում է Նոյեմբերյան խոշոր համայնքի Ոսկեպար գյուղի վարչական տարածքում, մյուսը՝ Բերդ խոշոր համայնքի սահմանամերձ Այգեպար գյուղի նախկին, խորհրդային տարիներին գործած փոքր օդանավակայանի տարածքում: Ռուսական զինուժի համար երրորդ զորանոցը կառուցվում էր Իջեւան խոշոր համայնքի սահմանամերձ Աչաջուր գյուղի տարածքում, գյուղ մտնող հիմնական ճանապարհից ձախ գտնվող տարածքում: Հավաքովի կոնստրուկցիաներով զորանոցի շինարարությունը Աչաջրում սկսվել էր այս տարվա սկզբին, աշխատանքները կատարում էր Գորիսից շինարարական ինչ-որ ընկերություն: Աչաջրի վարչական ղեկավար Կարեն Ղալթախչյանը հայտնեց, որ կիսատ մնացած շինարարությունը շարունակություն չի ունենալու, այդտեղ սարքվածն առաջիկա օրերին ապամոնտաժվելու է:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՀԱՊԿ-Ը ԵՐԿՈՒ ՏԱՐԻ ՈՒՇԱՑՈՒՄՈՎ ԸՆԴՈՒՆԵՑ

Արեւելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային պլատֆորմը հայտարարություն է տարածել Հայաստանի՝ ՀԱՊԿ-ից դուրս գալու անհրաժեշտության մասին. «Արեւելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության Հայաստանի ազգային պլատֆորմը իր խորը մտահոգությունն է հայտնում Երեւանում ս.թ. նոյեմբերի 23-ին ՀԱՊԿ Համատեղ անվտանգության խորհրդի նիստի անցկացման կապակցությամբ:

Վերջին շրջանում տեղի ունեցող աշխարհաքաղաքական եւ տարածաշրջանային զարգացումները ցույց տվեցին, որ ՀԱՊԿ կողմից իրականացվող գործողությունները չեն արձագանքում այդ կառույցի անդամների անվտանգային մարտահրավերներին, փոխարենը հաճախ սպասարկում են որոշ երկրների ներքին քաղաքական օրակարգերը եւ ծառայում քաղաքական ռեժիմների վերարտադրման նպատակին: Այդպես՝ ս.թ. հունվարին ՀԱՊԿ-ը Ղազախստանի հրավերով իր խաղաղապահներին գործուղեց այդ երկիր՝ իրականացնելու գործառույթներ, որոնք իրենց բնույթով խաղաղապահությանը չէին վերաբերում, մինչդեռ երբ 2021թ. մայիսի 12-ին, ապա եւ՝ ս.թ. սեպտեմբերի 12-14-ը Հայաստանը դարձավ Ադրբեջանի դիկտատորական ռեժիմի ագրեսիայի թիրախ, եւ նրա տարածքներից շուրջ 150 քառակուսի կիլոմետր օկուպացվեց, իսկ հարյուրավոր զինվորներ եւ խաղաղ բնակիչներ զոհվեցին, վիրավորվեցին, գերեվարվեցին, խոշտանգվեցին կամ գնդակահարվեցին, իսկ խոշտանգման եւ գնդակահարության դեպքերը նկարահանվեցին հենց ադրբեջանցի զինվորականների կողմից եւ տարածվեցին համացանցում, ՀԱՊԿ որեւէ երկիր չդատապարտեց Հայաստանի դեմ Ադրբեջանի ագրեսիան, նրա տարածքների օկուպացիան եւ Հայաստանի քաղաքացիների հանդեպ կատարված ռազմական հանցագործությունները: Միեւնույն ժամանակ Հայաստանի սուվերենության եւ անվտանգության պաշտպանությանն ուղղված գործուն քայլերով աչքի ընկան մեր երկրի արեւմտյան գործընկերները՝ Եվրամիությունը, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահողներ ԱՄՆ եւ Ֆրանսիան, որոնք այլ գործողությունների թվում նաեւ դատապարտեցին Հայաստանի դեմ ուղղված ոտնձգությունները: Հենց ԱՄՆ միջնորդությամբ կանգնեցվեց Ադրբեջանի ագրեսիան Հայաստանի դեմ, իսկ Հայաստանի արեւելյան սահմանին տեղակայվեցին Եվրամիության քաղաքացիական դիտորդներ՝ զսպելու համար Ալիեւի ռեժիմի հետագա ագրեսիվ նկրտումները: Մենք նաեւ բարձր ենք գնահատում ադրբեջանական հասարակության առաջադեմ այն ներկայացուցիչների կեցվածքը, որոնք եւս դատապարտեցին Հայաստանի դեմ ագրեսիան եւ նոր պատերազմի սանձազերծումը, ինչը հույս է ներշնչում երկու ժողովուրդների միջեւ խաղաղ համակեցության հեռանկարի հանդեպ: Մինչդեռ ՀԱՊԿ անդամ Ռուսաստանի ներկայացուցիչը ս.թ. սեպտեմբերի 15-ին հրավիրված ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի նիստում միակն էր, որը փաստացի պաշտպանեց եւ արդարացրեց ՀԱՊԿ անդամ Հայաստանի դեմ Ադրբեջանի ագրեսիան եւ տարածքների օկուպացիան՝ այն անվանելով «դելիմիտացիայի դժվարություններ»: Միայն Հայաստանի իշխանությունների հետեւողական պահանջներից հետո ՀԱՊԿ-ը 2 ամիս ուշացումով ընդունեց Հայաստանի տարածքների օկուպացիայի փաստը, սակայն դրանով հանդերձ՝ մերժեց ՀԱՊԿ վերջին առցանց նիստի ընթացքում ՀՀ վարչապետի առաջարկած ճանապարհային քարտեզի ընդունումը, որով սահմանվելու էր Հայաստանի տարածքից Ադրբեջանի զորքերի դուրսբերման մեխանիզմը: Այդ կապակցությամբ ՀԱՊԿ-ում նախագահությունը ստանձնող Բելառուսի նախագահ Լուկաշենկոն բաց տեքստով հրապարակային հայտարարեց, որ ոչ մի նման ճանապարհային քարտեզ չի կարող կազմվել, քանի որ «Իլհամ Ալիեւը մեր մարդն է»: Այս ամենը հիմք է տալիս մտածելու, որ Հայաստանի դեմ ագրեսիան պլանավորված էր Կրեմլի հետ համատեղ եւ ուղղված էր ոչ միայն Հայաստանի տարածքային ամբողջականության, այլեւ նրա անկախության եւ ինքնիշխանության դեմ: Միաժամանակ ՀԱՊԿ անդամներ Ռուսաստանը եւ Բելառուսը Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի դեմ 1991թ.-ից ի վեր երրորդ անգամ ագրեսիա իրականացրած Ադրբեջանի հարձակողական սպառազինությունների հիմնական մատակարարներն են: Մյուս կողմից՝ Ռուսաստանը մինչ օրս հրաժարվում է կատարել 2020թ.-ին ՀԱՊԿ կարգավորումների ներքո իրենից Հայաստանի գնած սպառազինությունների մատակարարումները: Սրան պետք է ավելացնել նաեւ այն հանգամանքը, որ ՀԱՊԿ անդամ մի շարք երկրներ շնորհավորել են Ադրբեջանին 2020թ.-ին Լեռնային Ղարաբաղի ժողովրդի դեմ վերջինի ագրեսիայի ընթացքում «հաղթանակի» կապակցությամբ: Բացի այդ, ՀԱՊԿ անդամ Ռուսաստանը չիրահրված եւ ագրեսիվ պատերազմ է սանձազերծել Ուկրաինայի դեմ՝ զավթելով նրա տարածքների զգալի մասը, սպանելով տասնյակ հազարավոր քաղաքացիների, փախստական կամ ներքին տեղահանված անձ դարձնելով շուրջ 10 միլիոն մարդու, կատարելով բազմաթիվ այլ հանցագործություններ եւ պատճառելով Ուկրաինայի ժողովրդին բազմաթիվ տառապանքներ, ինչը դատապարտվել է Արեւելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումի, նրա Հայաստանի ազգային պլատֆորմի եւ բազմաթիվ այլ միջազգային հեղինակավոր կազմակերպությունների եւ երկրների կողմից: Այս առումով անընդունելի ենք համարում նաեւ Հայաստանի Հանրապետության տարածքում հանրային մուլտիպլեքսի միջոցով Ռուսաստանի Դաշնության պետական հեռուստաընկերությունների կողմից այլատյացություն եւ պատերազմի քարոզչություն սփռումը, ինչն արգելված է ՀՀ սահմանադրությամբ եւ օրենքներով: Հիմք ընդունելով վերը թվարկածը, ինչպես նաեւ համոզմունք ունենալով, որ Հայաստանի տեղը ոչ թե ավտորիտար ռեժիմների ակումբում է, այլ ժողովրդավարական երկրների Եվրոպական ընտանիքում՝ ԱԼԳ ՔՀՖ Հայաստանի ազգային պլատֆորմը պահանջում է Հայաստանի կառավարությունից. 1. Անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքները կատարելով՝ դուրս բերել Հայաստանը ՀԱՊԿ-ից. 2. Արգելել Հայաստանի Հանրապետության տարածքում Ռուսաստանի Դաշնության պետական հեռուստաընկերությունների՝ առաջին հերթին վերգետնյա հեռարձակումը հանրային մուլտիպլեքսի միջոցով: 3. Ակտիվացնել բանակցությունները արեւմտյան գործընկերների հետ՝ ռազմական եւ անվտանգային համագործակցության խորացման եւ մեր երկրի անվտանգության ապահովման նպատակով: 4. Վերսկսել Եվրամիության հետ բանակցությունները ԵՄ-ի հետ Ասոցացման համաձայնագրին եւ Խորը եւ համապարփակ ազատ առեւտրի գոտուն միանալու նպատակով»: Հիշեցնենք, որ երեկ տեղի ունեցավ ՀԱՊԿ անդամ երկրների հանդիպումը Երեւանում:

ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՐԴԻ ՀՐԱՄԱՆ

Նախագահ Հարությունյանը պաշտոններից ազատման վերաբերյալ հրամանագրեր է ստորագրել.

Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը նոյեմբերի 23-ին ստորագրել է մի շարք հրամանագրեր՝ պաշտոններից ազատման վերաբերյալ:

Համաձայն այդ հրամանագրերի՝ Միքայել Հայրիյանն ազատվել է Առողջապահության նախարարի պաշտոնից: Առողջապահության նախարարի պարտականությունները ժամանակավոր վերապահվել են նախարարի տեղակալ Արթուր Օհանջանյանին:

Նորայր Մուսայելյանն ազատվել է գյուղատնտեսության նախարարի պաշտոնից: Գյուղատնտեսության նախարարի պարտականությունները ժամանակավոր վերապահվել են նախարարի առաջին տեղակալ Տիգրան Առստամյանին: Անահիտ Հակոբյանն ազատվել է կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի պաշտոնից: Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի պարտականությունները ժամանակավոր վերապահվել են նախարարի տեղակալ Հասմիկ Մինասյանին: Արմինե Պետրոսյանն ազատվել է սոցիալական զարգացման եւ միգրացիայի նախարարի պաշտոնից: Սոցիալական զարգացման եւ միգրացիայի նախարարի պարտականությունները ժամանակավոր վերապահվել են նախարարի առաջին տեղակալ Վահրամ Առաքելյանին:

Հայկ Խանումյանն ազատվել է տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարի պաշտոնից: Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարի պարտականությունները ժամանակավոր վերապահվել են նախարարի առաջին տեղակալ Վարդան Բեգլարյանին: Ժիրայր Միրզոյանն ազատվել է արդարադատության նախարարի պաշտոնից եւ նշանակվել արդարադատության նախարարի ժամանակավոր պաշտոնակատար: Դավիթ Բաբայանն ազատվել է արտաքին գործերի նախարարի պաշտոնից եւ նշանակվել արտաքին գործերի նախարարի ժամանակավոր պաշտոնակատար:

Արամ Սարգսյանն ազատվել է քաղաքաշինության նախարարի պաշտոնից եւ նշանակվել քաղաքաշինության նախարարի ժամանակավոր պաշտոնակատար: Վահրամ Բաղդասարյանն ազատվել է ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարի պաշտոնից եւ նշանակվել ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարի ժամանակավոր պաշտոնակատար:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 8 ճՏՊ. 10 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ՉԵՌՆՊԱՀ ՄՆԱԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻՑ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը հորդորում է տնտեսվարող սուբյեկտներին «Սեւ ուրբաթ»-ի ժամանակ հաճախակի կիրառվող զեղչերի եւ այլ ակցիաների ընթացքում խստիվ պահպանել տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության դրույթները: Հիշեցնում ենք, որ այս տարվա հուլիսի 31-ից ուժի մեջ են մտել Հանձնաժողովի նախաձեռնությամբ ընդունված ««Առեւտրի եւ ծառայությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքը եւ հարակից օրենքները, որոնցով կարգավորումներ են սահմանվել զեղչերի եւ այլ ակցիաների համար: Ըստ այդմ՝ ապրանքի կամ ծառայության գինը զեղչվում է նախորդ ամսվա միջին գնից, ակցիա իրականացնողն ապահովում է միջին եւ զեղչված գների միաժամանակյա տեսանելիությունը սպառողի համար, միջակայքով զեղչի դեպքում առավելագույն շեմով զեղչը կիրառվում է ակցիային մասնակցող ապրանքների կամ ծառայության առնվազն 1/5-րդի նկատմամբ: Օրինակ՝ եթե հայտարարվում է 20-70% կամ մինչեւ 70% զեղչ 100 ապրանքի համար, դրանցից առնվազն 20-ը պետք է զեղչվի 70%-ով, զեղչերի եւ այլ ակցիաների իրականացման առավելագույն ժամկետը 3 ամիս է, ակցիա իրականացնողը չի կարող ապրանքի հետ նվեր տալ՝ միաժամանակ տվյալ ապրանքի գնի այնպիսի բարձրացում իրականացնելով, որով նվերի գինը մասնակի կամ ամբողջությամբ կներառվի այդ գնի մեջ, նոր պահանջներ են սահմանվել նաեւ ակցիաների իրազեկման համար, մասնավորապես պարտադիր պետք է նշվի ակցիայի բնույթը, մեկնարկի եւ ավարտի օրերը եւ այլն, իսկ ակցիայի պայմանների վերաբերյալ հրապարակման բովանդակության ամենամեծ եւ ամենափոքր տառաչափերի տարբերությունը չի կարող երկու անգամից ավելի լինել:

Օրենքով սահմանված պահանջներին չհամապատասխանող ակցիայի իրականացումը կարող է հանգեցնել անբարեխիղճ մրցակցության, որի դեպքում կարող է նշանակվել տուգանք տնտեսավարողի՝ տվյալ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչեւ 5 %-ի չափով:

ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Ակտիվ շինարարական աշխատանքներ են ընթանում 17 մեգավատ հզորությամբ «Գետավան» հիդրոէլեկտրակայանի կառուցման ուղղությամբ: Այս մասին նոյեմբերի 23-ին Ազգային ժողովի հեթական նիստում ասել է Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը՝ նշելով, որ հիդրոէլեկտրակայանի շինարարությունն իրականացվում է պետական միջոցներով: «Եթե ֆինանսական միջոցները բավարարեն, նախատեսվում է կառուցումն ավարտել գալիք տարում, եթե ոչ, ապա անպայման կավարտվի 2024 թվականին»,- մանրամասնել է նախագահ Հարությունյանը՝ հավելելով, որ «Գետավան» հիդրոէլեկտրակայանի կառուցման շնորհիվ Հանրապետությունն ամբողջությամբ կդառնա ինքնաբավ:

ՆՈՐ ՄԵԹՈԴՆԵՐ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ԵՊՀ-ՈՒՄ

ԵՊՀ-ում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության, Հայաստանում «Էրազմուս+» ծրագրի ազգային գրասենյակի ու Երեւանի պետական համալսարանի համատեղ ջանքերով կազմակերպվել էին «Դասավանդման եւ ուսումնառության մեթոդներ» խորագրով թեմատիկ հանդիպում եւ պանելային քննարկում:

ԿԳՄՍՆ-ից Armlur.am-ին հայտնում են, որ քննարկմանը մասնակցել եւ որպես բանախոս հանդես է եկել ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Թռչունյանը:

ԿԳՄՍ նախարարի տեղակալը, մատնանշելով թեմայի ընտրության արդիականությունը, փաստել է, որ այն պայմանավորված է բուհական համակարգում առկա խնդիրների՝ կրթության բովանդակության եւ կազմակերպման վերհանմամբ:

«Այսօր անհրաժեշտություն կա ՀՀ բուհերում ձեւավորել մասնագիտական համայնք, որը բարձրագույն կրթության ոլորտում կրթության արդյունավետ կազմակերպման համար կիրականացնի քննարկումներ եւ կտրամադրի բովանդակային խորհրդատվություն: Ակնհայտ է, որ 21-րդ դարում համալսարանները հումբոլդյան համակարգից փոփոխվում եւ ուղղորդվում են գիտահետազոտական, ձեռնարկատիրական աշխատանքներ իրականացնող համալսարանների, որտեղ մեծ դեր ունեն դասավանդման եւ ուսումնառության նորագույն մեթոդներն ու մոդելները:

Արդեն իսկ հասանելի են բազմաթիվ հետազոտություններ, որոնք հիմնավորում են դասավանդման եւ ուսումնառության գործընթացում ստեղծագործական մեթոդների, նորարարական գաղափարների իրականացման անհրաժեշտությունը: Հույս ունեմ, որ մոտակա ամիսներին կլինեն տեսանելի արդյունքներ, եւ նոր ուսուսումնական տարում կկարողանանք ժամանակակից մեթոդները ներդնել մեր բուհական համակարգում»,- նշել է Կարեն Թռչունյանը:

ԵՊՀ ակադեմիական/ուսումնական գծով պրոռեկտոր Էլինա Ասրիյանի կարծիքով՝ դասավանդման եւ ուսումնառության վերաբերյալ փորձագիտական քննարկումները կրթական գործընթացում կարեւորագույն դեր ունեն. «Պատասխանատվությունը եւ հետաքրքրությունն ընտրված թեմայի վերաբերյալ իսկապես կարեւոր են: Սա լավագույն հնարավորությունն է բարձրաձայնելու այնպիսի խնդիրներ, որոնք անհանգստացնում են կրթության ոլորտի մեր գործընկերներին: Լիահույս եմ, որ լավագույն փորձի ներկայացումը մեծապես կնպաստի առկա խնդիրների լուծմանը»:

Հայաստանում «Էրազմուս+» ծրագրի ազգային գրասենյակի համակարգող Լանա Կառլովան հատկապես ընդգծել է քննարկվող թեմայի ընդգրկունությունը, ինչպես նաեւ փաստել, որ ծրագիրը միավորել է կրթության ոլորտի ներկայացուցիչներին եւ ստեղծել բացառիկ հնարավորություն լավագույն, օրինակելի փորձը ներկայացնելու, կիրառելու, առկա խոչընդոտները վերհանելու առումով:

«Դասավանդման եւ ուսումնառության մեթոդներ» խորագրով թեմատիկ հանդիպման ընթացքում ներկայացվել են Եվրոպական միության «Էրազմուս+» ծրագրի շրջանակում առաջարկվող լավագույն փորձն ու հնարավորությունները, ծրագրի իրագործման ընթացքում առաջացած խնդիրները, ինչպես նաեւ քննարկվել են բարձրագույն կրթության ոլորտում կարողությունների զարգացման «PRINTeL», «ABIONET», «TOPAS», «MENVIPRO», «REFINE» ծրագրերը:

Վերոնշյալ ծրագրերի շրջանակում ուսումնասիրվել են դասավանդման մեթոդների եւ աշխատաշուկայի պահանջների համապատասխանությունը, ուսումնական ծրագրերում նորարարությունների, կարճաժամկետ դասընթացների ներդրումը եւ կարեւորագույն այլ հարցեր, որոնք տեսանելի են դարձնում կրթական ծրագրերի արդիականությունն ու միջազգայնացումը:

«Դասավանդման եւ ուսումնառության մեթոդներ» խորագրով թեմատիկ հանդիպմանը մասնակցել է ՀՀ շահառու տարբեր բուհերի դասախոսական եւ ուսանողական կազմի ավելի քան 100 ներկայացուցիչ, որի ընթացքում հարցուպատասխանի ձեւաչափով տեղի են ունեցել քննարկումներ:

Մասնակիցները բարձրաձայնել են իրենց հուզող հարցերը եւ կարծիքներ փոխանակել, պայմանավորվածություն է ձեռք բերվել ըստ ուղղությունների ձեւավորել խմբեր, որոնք ժամանակ առ ժամանակ կհանդիպեն եւ կրթության կազմակերպման բովանդակության մեջ փոփոխություններ կսկսեն իրենց բուհերում:

Որպես ամփոփում նշվել է, որ նմանօրինակ քննարկումների ընթացքում ոչ միայն մատնանշվում են կրթական գործընթացում առկա խնդիրները, այլեւ առաջարկվում են արդյունավետ լուծումներ եւ նոր մոտեցումներ, որոնք նպատակաուղղված են կրթության որակի բարելավմանը, միջազգային լավագույն փորձի ներդրմանը:

Ս. Հ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԵՐԹԱԿԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄ

«Կոնվերս» բանկը սույն թվականի նոյեմբերի 22-ին մեկնարկում է արժեկտրոնային պարտատոմսերի հերթական տեղաբաշխումը 3 մլրդ ՀՀ դրամ եւ 10 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով: Պարտատոմսերի արժեկտրոնային եկամտաբերությունը համապատասխանաբար 10.5% եւ 3.75% է, արժեկտրոնի պարբերականությունը՝ կիսամյակային:

«Կոնվերս» բանկի պարտատոմսերը հնարավոր կլինի ձեռք բերել ինչպես Բանկի մասնաճյուղերում, այնպես էլ Մոբայլ հավելվածի միջոցով, որտեղ հաշված րոպեների ընթացքում օգտատերը կարող է անցնել պարտատոմսերի գնման ողջ գործընթացը: Հավելվածում հասանելի է նաեւ ամբողջ տեղեկատվությունը թողարկման մասին:

Մոբայլ հավելվածում պարտատոմս ձեռք բերելու համար անհրաժեշտ կլինի Հավելվածի գլխավոր էջից մուտք գործել հայտերի բաժին՝ սեղմելով + նշանը, այնուհետեւ մուտք գործել «Կատարել ներդրում» էջ եւ հետեւել հրահանգներին:

Տեղաբաշխման ավարտից հետո պարտատոմսերը կցուցակվեն «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում՝ երկրորդային շուկայում շրջանառվելու համար: Ներկա պահին ՀՀ ֆոնդային բորսայում գնանշվում է Բանկի 5 մլրդ ՀՀ դրամ եւ 20 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով պարտատոմս:

Պարտատոմսերում ներդրումներն, ի տարբերություն ավանդի, ազատված են հարկերից: Պարտատոմսերը հնարավոր է վաճառել երկրորդային շուկայում՝ մինչեւ դրանց մարման ժամկետը: Պարտատոմսերով ներգրավված դրամական միջոցները երաշխավորված են Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից:

Թողարկման եւ տեղաբաշխման մանրամասներին, Ծրագրային ազդագրի եւ Թողարկման վերջնական պայմաններին կարելի է ծանոթանալ այս հղումով:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄ

«Ակբա» բանկը 2022 թվականի դեկտեմբերի 1-ից մինչեւ 2023 թվականի հունվարի 31-ը ներառյալ հրապարակային առաջարկով տեղաբաշխելու է 5.000.000 (հինգ միլիոն) ԱՄՆ դոլար եւ 3.000.000.000 (երեք միլիարդ) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով, տարեկան՝ համապատասխանաբար 5% եւ 11% եկամտաբերությամբ արժեկտրոնային ոչ փաստաթղթային պարտատոմսեր: Շրջանառության ժամկետը 36 ամիս է:

ՀՀ դրամի դեպքում մեկ պարտատոմսի անվանական արժեքը կազմում է 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ, իսկ ԱՄՆ դոլարի դեպքում՝ 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար:

Պարտատոմսերի ձեռքբերման համար ներդրողները պետք է լրացնեն եւ Ակբա բանկ ներկայացնեն պարտատոմսերի ձեռքբերման հայտեր:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ ֆիզիկական անձանց համար՝

Դրամային պարտատոմսերի ձեռքբերման հայտ

Դոլարային պարտատոմսերի ձեռքբերման հայտ

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ իրավաբանական անձանց համար՝

Դրամային պարտատոմսերի ձեռքբերման հայտ

Դոլարային պարտատոմսերի ձեռքբերման հայտ

«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ բանկի թողարկած անվանական պարտատոմսերով ներգրավված դրամական միջոցները համարվում են երաշխավորված բանկային ավանդ եւ երաշխավորված են «Ավանդների հատուցումը երաշխավորող» հիմնադրամի կողմից:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ԱՄԵՆԱՄԵԾ ԵՐԱԶԱՆՔ

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՆՎԱՆԵԼ ԵՐԵԽԱՅԻՆ

Ծնվել է 44-օրյա պատերազմում զոհված պահեստազորային Վահե Կարապետյանի եղբայրը: Վանը ծնվել է նոյեմբերի 17-ին «Էրեբունի» բժշկական կենտրոնում՝ 2 կգ 400 գրամ քաշով եւ 46 սանտիմետր հասակով:

Վահեի մայրը՝ 49-ամյա Անահիտ Մկրտչյանը, ասում է՝ իրականացրել է որդու ամենամեծ երազանքը:

«Վահես նույնիսկ բանակից էր ամեն օր զանգում ու խնդրում, որ երեխա ունենանք: Ասում էր՝ մա՛մ ջան, բանակից գամ, նորությունն անկողնում պառկած լինի: Հիմա Վահես երկնքից տեսնում է, որ ես ու ամուսինս իրականացրել ենք իր ամենակարեւոր նպատակներից մեկը: Շատ եմ ուզում, որ Վանս եղբոր ճանապարհով գնա, Վահես տեսնի, որ իր ճանապարհը շարունակող կա, իր կիսատ մնացած երազանքներն իրականացնող կա»,- ասում է մայրը:

Անահիտ Մկրտչյանի խոսքով՝ ինքն ու ամուսինը գիտակցաբար են գնացել այս որոշմանը եւ չնայած իր տարիքին ու առողջական խնդիրներին՝ Աստծո օրհնությամբ բալիկ են ունեցել. «Ես իր մեջ չեմ ուզում Վահե տեսնել, ես ուզում եմ տեսնել Վանին, որը շարունակելու է Վահեի գործը: Ես չեմ ուզում որպես Վահե սիրել, ես ուզում եմ, որ Վանը հպարտ լինի, որ Վահեի եղբայրն է: Աննկարագրելի իրականություն է սա, Վանը փոխեց մեր ընտանիքի մթնոլորտը, հնարավորություն տվեց, որ մեր դեմքին մի փոքր ժպիտ գա»:

Հղիությունը վարել եւ կեսարյան հատումն արել է «Էրեբունի» բժշկական կենտրոնի ծննդատան փոխտնօրեն Դավիթ Աբովյանը. «Անահիտ Մկրտչյանը եղել է ռիսկային խմբում, բացի տարիքից՝ նաեւ դիաբետ է ունեցել, վերջին օրերին նաեւ ճնշման տատանումներ ուներ: Այս ամենը հաշվի առնելով՝ մենք ժամկետից շուտ ենք կեսարյան հատումն իրականացրել: Ներկայումս ե՛ւ երեխան, ե՛ւ մայրը իրենց լավ են զգում»:

21-ամյա Վահե Կարապետյանը պարտադիր ժամկետային ծառայությունից վերադարձել էր 2019թ.-ի ամռանը, սովորում էր Երեւանի պետական համալսարանում, մասնագիտությամբ դեղագործ էր: Վահեն աշխատում էր NEWS.am-ում որպես օպերատոր, մոնտաժող: 44-օրյա պատերազմի ժամանակ նա հնարավորություն ուներ պատերազմ չմեկնելու, սակայն կամավոր մեկնել է Արցախ: Վահեն մասնակցել է Մատաղիսի, ապա Շուշիի մարտերին, նոյեմբերի 6-ին Շուշիում ծանր վիրավորում է ստացել, որից հետո տեղափոխվել է Երեւան:

Նոյեմբերի 9-ին, այդպես էլ գիտակցության չգալով, Վահեն մահացել է պատերազմի ավարտի վերաբերյալ հայտարարությունից մի քանի ժամ առաջ:

«Ասում էր՝ ես հո փալա՞ս չեմ, որ փողոցում քայլեմ, ինձնից փոքր տղաներն առաջնագծում կռվեն: Ինձ անընդհատ ասում էր՝ մա՛մ ջան, ես փալաս չեմ...»,- պատմում է մայրը:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԳԵՐԻ ԵԶԱԿԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

ՀՀ ԿԳՄՍ նախարարության դրամաշնորհային աջակցությամբ նոյեմբերի 23-ին Հայաստանի պատմության թանգարանում բացվել է «Դրվագներ ինքնության. գորգ» խորագրով ժամանակավոր ցուցադրությունը, որում ներառված է Հայաստանի պատմության թանգարանի ազգագրության ֆոնդում պահվող գորգերից մի արժեքավոր ընտրանի:

Ցուցադրությանը ներկայացվել են գորգերի, կարպետների, աղամանների, անկողնապարկերի, խուրջինների եւ այլ իրերի մի քանի տասնյակ եզակի օրինակներ:

Հավաքածուում ներառված գորգերի եւ կարպետների ժամանակագրությունն ու աշխարհագրությունը լայն է՝ դրանք պատրաստվել են Վասպուրականի, Բարձր Հայքի, Արցախի, Սյունիքի, Նախիջեւանի, Լոռիի, Շիրակի, ինչպես նաեւ հայաշատ բնակավայրերի՝ Կիլիկիայի, Կեսարիայի, Պարսկաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Հնդկաստանի, Բուլղարիայի հայ վարպետների կողմից:

Հավաքածուի մեջ ներառված վաղ շրջանի նմուշներ են 15-րդ, 16-րդ՝ Վասպուրականում, Արցախում, Սյունիքում, Գանձակում, 17-րդ՝ Բայազետում, Վանում, 18-րդ՝ Արցախում, Սյունիքում, Վասպուրականում, Արաբկիրում հյուսված եւ 19-րդ եւ 20-րդ դարերով թվագրվող գորգերի մի քանի տասնյակ օրինակներ:

Ըստ հորինվածքների՝ նմուշները պատկանում են Արեւագորգ, Ջրաբերդ, Պռոշբերդ, Խաչաստղ, Մեմլինգ, Վարանդա, Թռչնաբուն, վիշապագորգերից՝ Խնձորեսկ, Որոտան, Խորանագորգ, Ծաղկագորգ, կեռազարդ, շեղանկյուն վահաններով, կենաց ծառերով, բուսանախշերով եւ այլ տիպերին:

Ցուցադրության նպատակն է հանրությանն ի ցույց դնել Հայաստանի պատմության թանգարանում պահվող գորգերի եւ կարպետագործ առարկաների դեռեւս չցուցադրված նմուշները, որոնք էապես կնպաստեն գորգագործական ավանդույթի ներկայացման եւ բացահայտման գործին:

ԼՈՒՐԵՐ

ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ֆուտբոլային ինսայդեր Ֆաբրիցիո Ռոմանոն հայտնել է, որ Լոնդոնի «Չելսի»-ն երկարաժամկետ պայմանագիր է համաձայնեցրել Մոսկվայի «Դինամո»-ի եւ Ռուսաստանի հավաքականի կիսապաշտպան Արսեն Զախարյանի հետ: Ռոմանոն հայտնել է, որ ֆուտբոլիստի եւ ակումբի միջեւ պայմանագրի հիմնական կետերը համաձայնեցվել են դեռ ամառվանից, իսկ «Չելսի»-ն կշարունակի բանակցությունները «Դինամո»-ի հետ, որպեսզի 2023 թվականին գործարքն ավարտին հասցնի: Նա նաեւ նշել է, որ «Չելսի»-ում վստահ են, որ գործարքը կկայանա: Արսեն Զախարյանի նկատմամբ անգլիական ակումբի հետաքրքրության մասին լուրերը սկսեցին շրջանառվել ամառային տրանսֆերային պատուհանի ընթացքում: «Չելսի»-ի հետաքրքրվածության մասին լուրերը հաստատել էր նաեւ Զախարյանի գործակալը, ֆուտբոլիստը եւս հայտարարել էր «Չելսի» տեղափոխվելու ցանկության մասին: Գործարքը, սակայն, չկայացավ՝ պայմանավորված Ռուսաստանի դեմ սահմանված պատժամիջոցներով:

ՀԱՄԵՄԱՏՈՂՆԵՐԸ ՉԵՆ ՀԱՄԿԱՆՈՒՄ

Լեգենդար արգենտինացի ֆուտբոլիստ Դիեգո Մարադոնայի որդին մեկնաբանել է Արգենտինայի հավաքականի պարտությունը Սաուդյան Արաբիայից (1:2) աշխարհի առաջնության խմբային փուլի առաջին տուրի խաղում: «Դժվար է հավատալ, որ այս ամենը իրականություն է: Խելահեղություն է Սաուդյան Արաբիային պարտվելը, բայց ֆուտբոլում երբեմն պատահում են այսպիսի սենսացիաներ: Հորս եւ Մեսիին համեմատողները ոչինչ չեն հասկանում ֆուտբոլից: Մենք խոսում ենք երկու տարբեր մոլորակների մասին, բայց ես չեմ ցանկանում այս պարտությունից հետո որեւէ բացասական բան ասել Մեսիի մասին»,- Դիեգո Արմանդո Մարադոնա կրտսերը նշել է իր խոսքում: Առաջին տուրից հետո C խմբում Սաուդյան Արաբիան (3 միավոր) առաջատարն է, Մեքսիկան ու Լեհաստանը 1-ական միավորով կիսում են երկրորդ եւ երրորդ տեղերը: Արգենտինան (0) վերջինն է:

ՉԵՆ ԿԱՐՈՂ ՀԱՅՏԱՎՈՐԵԼ

Աշխարհի չեմպիոն Ֆրանսիայի հավաքականի գլխավոր մարզիչ Դիդիե Դեշամը չի կարողանա նոր խաղացողի հայտավորել վնասվածք ստացած պաշտպան Լուկաս Էրնանդեսի փոխարեն: Հայտացուցակների փոփոխության վերջնաժամկետը նոյեմբերի 21-ն էր:

Գերմանիայի չեմպիոն Մյունխենի «Բավարիայի» ֆուտբոլիստը ծնկի վնասվածք էր ստացել Ֆրանսիա - Ավստրալիա (4:1) հանդիպման արդեն 13-րդ րոպեին եւ փոխարինվել: Նրա համար աշխարհի առաջնությունն ավարտված է: Ֆրանսիայի հավաքականն այս աշխարհի առաջնությանը մասնակցում է առանց հիմնական կազմի խաղացողներ Նգոլո Կանտեի, Պոլ Պոգբայի, Մայք Մենյանի, Քարիմ Բենզեմայի, Կրիստոֆեր Նկունկուի, Պրեսնել Կիմպեմբեի: Բոլորը վնասվածքների պատճառով չեն խաղում: Հաջորդ հանդիպումը Ֆրանսիայի հավաքականը կանցկացնի նոյեմբերի 26-ին Դանիայի դեմ:

● Նոյեմբերի 27-ին «Բոհեմ» թատրոնում տեղի կունենա սթենդափ՝ «Էվոլյուցիա»: Տոմսերի արժեքը՝ 3000-6000 դրամ: Սկիզբը՝ 19:30:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Հայրությունը դատական կարգով որոշելը:
Կարինե Աթանեսյան (29 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ամուսնության մեջ չգտնվող ծնողներից երեխա ծնվելու դեպքում, եթե բացակայում է ծնողների համատեղ դիմումը կամ երեխայի հոր դիմումը, ապա որոշակի անձից երեխայի սերված լինելու փաստը (հայրությունը) որոշվում է դատական կարգով՝ համապատասխանաբար ծնողներից մեկի կամ մոր, երեխայի խնամակալի (հոգաբարձուի), կամ այն անձի դիմումի հիման վրա, որի խնամքին է գտնվում երեխան, իսկ երեխայի չափահաս դառնալուց հետո՝ վերջինիս ներկայացրած դիմումի հիման վրա: Այս դեպքում դատարանը հաշվի է առնում ցանկացած ապացույց, որը ստույգ հաստատում է, որ տվյալ երեխան սերվել է որոշակի այդ անձից:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Իրեն երեխայի հայր ճանաչած, բայց երեխայի մոր հետ ամուսնության մեջ չգտնվող անձի մահվան դեպքում վերջինիս որպես երեխայի հայր ճանաչելու (հայրության) փաստը կարող է հաստատվել դատական կարգով՝ քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ սահմանված նորմերով:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԴԱՏԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ո՞րն է համարվում հանցագործությունների համակցությունը
Պատվական Օհանյան (35 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Հանցագործությունների համակցություն է համարվում միեւնույն անձի կողմից մեկ կամ մեկից ավելի արարքներով սույն օրենսգրքով նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատարելը, եթե նա դրանցից ոչ մեկի համար քրեական պատասխանատվության չի ենթարկվել: Եթե անձի մեկ արարքում առկա են սույն օրենսգրքի միեւնույն հոդվածի միեւնույն մասի տարբեր կետերով նախատեսված ծանրացնող հանգամանքներ, ապա հանցագործությունների համակցությունը բացակայում է: Այդ դեպքում արարքը որակելիս՝նշվում են այն բոլոր կետերը, որոնցում նախատեսված հանգամանքներն առկա են անձի արարքում:

ՀՀ քննչական կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հանցագործությունների համակցությունը բացակայում է նաեւ երկընտրելի օբյեկտիվ կողմ ունեցող հանցակազմերի իրականացման այն դեպքում, երբ միեւնույն անձը միասնական դիտավորությամբ կատարում է այդ հանցակազմի օբյեկտիվ կողմի մեջ մտնող մեկից ավելի արարքներ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը արվել է Լոռու մարզում

Սպիտակ-Երեւան ավտոճանապարհի 9-րդ կմ հատվածում բախվել են 61-ամյա Սուրիկ Խալաթյանի վարած BMW մակնիշի եւ 58-ամյա Աղաջան Մնացականյանի վարած Renault Logan մակնիշի ավտոմեքենաները:Վթարի հետեւանքով տուժածներ չկան:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **23.11.2022**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: